Արձանագրություն 3

ՀՀ ՖՆ կարիքների համար «ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-23/7» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 10.11.2023թ. ժամը 11:00-ին:

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ

Մ. Տեր-Հովհաննեսյան – ՖՆ մարդկային ռեսուրսների կառավարման վարչության գլխավոր մասնագետ,

Հանձնաժողովի անդամներ

Ա. Մարտիրոսյան – ՖՆ կառավարչական հարցերի կազմակերպման վարչության ֆինանսատնտեսական բաժնի գլխավոր մասնագետ,

Հ. Ղազարյան - ՖՆ կառավարչական հարցերի կազմակերպման վարչության ֆինանսատնտեսական բաժնի գլխավոր մասնագետ,

Ա. Ղազարյան - ՖՆ մարդկային ռեսուրսների կառավարման վարչության գլխավոր մասնագետ

Ա. Սարգսյան – ՖՆ մարդկային ռեսուրսների կառավարման վարչության գլխավոր մասնագետ,

Գնումները համակարգող

Ա. Աղաբաբյան - ՖՆ կառավարչական հարցերի կազմակերպման վարչության գնումների բաժնի պետ

1. **Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին**

Հանձնաժողովն ընդունեց ի գիտություն, որ ՀՀ ՊԵԿ «ՈՒսումնական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված հայտում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝

1. ներկայացված հայտում առկա չէ հրավերով պահանջվող՝ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երկու տարիների ընթացքում պատշաճ ձևով իրականացրած վերապատրաստման ծառայությունների մատուցման առնվազն մեկ պայմանագրի (պայմանագրերի, համաձայնագրերի) պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի, համաձայնագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

2. ներկայացված հայտում բացակայում են առաջադրված աշխատակազմում ներգրավված մասնագետների հավաստումները աշխատանքային փորձի (հսմապատասխան թեմաների դասավանդման առնվազն 500 ակադեմիական ժամի փորձ՝ այդ թվում միջազգային) վերաբերյալ:

3. ներկայացված հայտով առաջադրված մասնագետ Շանթ Ալճյանի դիպլոմը ներկայացված չէ հայերեն լեզվով:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

2. Հանձնաժողովի կայացրած որոշումները

Հանձնաժողովը որոշեց

1. Կասեցնել գնահատող հանձնաժողովի նիստը 1 աշխատանքային օրով և ծանուցել ՀՀ ՊԵԿ «ՈՒսումնական կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ առաջարկելով հրավերով սահմանված ժամկետում շտկել հայտում առկա անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

3. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը

«ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-23/7» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստը հրավիրել սույն թվականի նոյեմբերի 14-ին ժամը 12:00-ին ՀՀ ֆինանսների նախարարության վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Մ. Ադամյան 1:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ – 0

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ _____ Մ. Տեր-Հովհաննեսյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Ա. Մարտիրոսյան

_____ Հ. Ղազարյան

_____ Ա. Ղազարյան

_____ Ա. Սարգսյան

Գնումները համակարգող՝ _____ Ա. Աղաբաբյան